



**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ  
N 1, 2 (83, 84) դեկտեմբերի 21 -փետրվարի 20**

17 մայիս 2016

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ.....	3
1.1 ՀՀ օրենքներ.....	3
1.2 ՀՀ կառավարության որոշումներ.....	12
1.3 Հրամաններ, պաշտոնական պարզաբանումներ և այլ իրավական ակտեր.....	14
2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ.....	18
2.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների.....	18
2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ.....	18
2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ.....	20

# 1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

## 1.1 ՀՀ օրենքներ

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	15.12.2015, ՀՕ-154-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 87 (1176), 23.12.2015թ
Ուժի մեջ է	01.01.2018թ

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների համաձայն՝ նախատեսվում է.

1. հնարավորինս պարզեցնել հարկ վճարողների կողմից պետական բյուջեի հանդեպ պարտավորությունների կատարման գործընթացը: Մասնավորապես.

1.1 սահմանվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող պետական բյուջեի եկամուտների հաշվառման նոր կարգ, համաձայն որի հարկային պարտավորությունների վճարման համար ներկայումս գործող բազմաթիվ գանձապետական հաշիվների փոխարեն նախատեսվում է բացել մեկ գանձապետական հաշիվ,

1.2 հանվել են տուգանքների՝ օրենքով սահմանված ժամկետներում չվճարման դեպքում դրանց կրկնապատկման դրույթները,

1.3 կարգավորվել են միասնական հաշվում առկա գումարների վերադարձման հետ կապված հարցերը:

2. Հստակեցվել են ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտների կողմից հարկային մարմին հաշվարկ, հաշվետվությունների ներկայացման հետ կապված հարցերը: Մասնավորապես, սահմանվել է, որ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները.

2.1 յուրաքանչյուր հաշվետու տարվա համար մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ն իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևի հաշվետվություն՝ գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառության վերաբերյալ,

2.2 յուրաքանչյուր հաշվետու ամսվա համար մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի ամփոփ հաշվարկ՝ ընտանեկան ձեռնարկատիրության մասով հարկային գործակալի կողմից վճարվող հարկվող եկամուտների և դրանց մասով վճարված եկամտային հարկի վերաբերյալ:

Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
------------	--

Ամսաթիվը և համարը	02.12.2015թ, ՀՕ-155-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 87 (1176), 23.12.2015թ
Ուժի մեջ է	01.01.2018թ

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝

1. շահութահարկ վճարողների կողմից հարկային մարմին տարեկան շահութահարկի հաշվարկի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը (նախկինում սահմանված՝ ապրիլի 15-ի փոխարեն),

2. վերանայվել է հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտին վճարվող եկամուտներից աղբյուրի մոտ պահված շահութահարկի գումարի՝ բյուջե վճարման, ինչպես նաև համապատասխան հաշվարկ ներկայացնելու պարբերականությունը: Այսպես.

2.1 պահված (գանձված) շահութահարկի գումարը հարկային գործակալը պարտավոր է ոչ ռեզիդենտին եկամուտների վճարման եռամսյակին հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ վճարել բյուջե (նախկինում սահմանված՝ ամսական պարբերականության փոխարեն),

2.2 հարկային գործակալը պարտավոր է եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի առաջին ամսվա 20-ից ոչ ուշ, վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով էլեկտրոնային եղանակով ներկայացնել ամփոփ հաշվարկ իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմին՝ անցած եռամսյակում ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտների, պահված և բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին (նախկինում սահմանված՝ տարեկան պարբերականության փոխարեն):

Փաստաթուղթ	«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	15.12.2015թ, ՀՕ-157-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 87 (1176), 23.12.2015թ
Ուժի մեջ է	01.01.2018թ

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝

1. 2016 թվականի հունվարի 1-ից՝ սահմանվել է, որ ակցիզային հարկով չեն հարկվում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարումը օդանավակայանում գործող անմաքս առևտրի խանութի կազմակերպչին,

2. օրենքում կատարված, 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող փոփոխությունները պայմանավորված են «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-154-Ն)՝ գանձապետական մեկ հաշվի համակարգի ներդրման արդյունքում, համապատասխան իրավական հիմքերի ապահովման անհրաժեշտությամբ,

3. Սահմանվել է, որ ՀՀ-ում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների, հարկ վճարողները ակցիզային հարկի հաշվարկներ չեն ներկայացնում և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, վճարում են ակցիզային հարկը և դրա հաշվարկման վերաբերյալ տեղեկություններն արտացոլում են ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում (այս դրույթն ուժի մեջ է՝ 2018 թվականի հունվարի մեկից):

Փաստաթուղթ	«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	15.12.2015թ, ՀՕ-158-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 87 (1176), 23.12.2015թ
Ուժի մեջ է	01.01.2018թ

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող և (կամ) «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված և (կամ) «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակների մասով հարկ վճարողները եկամտային հարկը ամսական 5 հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկում և վճարում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը, որը նրանց համար համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	15.12.2015թ, ՀՕ-159-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 87 (1176), 23.12.2015թ
Ուժի մեջ է	01.01.2018թ

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ սահմանվել է, որ.

1. հարկային պարտավորության ծագման օր է համարվում ապրանքները ՀՀ տարածքից փաստացի արտահանելու (ՀՀ պետական սահմանը հատելու) օրվան հաջորդող **181-րդ** օրը (սույն դրույթն ուժի մեջ է՝ 2016 թվականի հունվարի 1-ից),

2. հաշվարկված և վճարված ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկի գումարները, ինչպես նաև արտահանման գործարքների մասով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարները ենթակա են հաշվանցման այլ հարկային պարտավորությունների դիմաց կամ վերադարձման՝ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկով հարկման ենթակա՝ արտահանված ապրանքների օտարման մասով ակցիզային հարկի գումարների՝ այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման համար օրենքով սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում (այս դրույթները ուժի մեջ են 2016թ. հունվարի 1-ից և գործողությունը տարածվում է 2015 թվականի հունվարի 2-ից հետո ծագած հարաբերությունների վրա),

3. օրենքում կատարված, 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող փոփոխությունները պայմանավորված են «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-154-Ն)՝ գանձապետական մեկ հաշվի համակարգի ներդրման արդյունքում, համապատասխան իրավական հիմքերի ապահովման անհրաժեշտությամբ:

4. Ուժը կորցրած է ճանաչվել.

- օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն արտահանողը, մինչև արտահանման օրվան հաջորդող 180-րդ օրը, կարող էր դիմել իր հաշվառման վայրի հարկային մարմին իր կատարած արտահանման գործարքների մասով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի պարտավորությունները հաշվարկելու համար,

- օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ հոդվածի 5-րդ մասերը, որոնք վերաբերում են այն դրույթներին, երբ օրենքով սահմանված դեպքում հարկային մարմնի կողմից ներկայացված գրավոր ծանուցագրի հիման վրա ներմուծողը պետք է վճարեր ծանուցագրում նշված հարկման բազայի 80 տոկոսի և իր կողմից հաշվարկված հարկման բազայի տարբերությունից հաշվարկվող հարկերը:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	15.12.2015թ, ՀՕ-160-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 87 (1176), 23.12.2015թ
Ուժի մեջ է	01.01.2018թ

#### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ սահմանվել է, որ.

1. ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկումը՝ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառումն է **օդանավակայանում գործող անմաքս առևտրի խանութից ապրանքների մանրածախ վաճառքը միջազգային երթուղիներով մեկնող և ժամանող ուղևորներին, ինչպես նաև այլ հարկ վճարողների կողմից այդ ապրանքների մատակարարումը անմաքս առևտրի խանութի կազմակերպչին** (սույն դրույթն ուժի մեջ է մտել 2016թ. հունվարի 1-ից և տարածվում է 2015թ. հունվարի 2-ից հետո ծագած հարաբերությունների վրա),

2. ԱԱՀ վճարող համարվելուց դադարած անձանց մոտ ԱԱՀ վճարող համարվելուց դադարելու օրվա դրությամբ առկա կամ ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում առաջացած ԱԱՀ-ի դեբետային մնացորդը հետագայում կարող է մարվել ԱԱՀ-ի պարտավորությունների հաշվին,

3. Հարկային մարմինն ուսումնասիրության արձանագրության կամ ստուգման ակտի օրինակը հարկ վճարողին տրամադրելու միջոցով տեղեկացնում է հաշվանցման կամ միասնական հաշվին գումարի մուտքագրման իրավունքը լրիվ կամ մասնակիորեն ճանաչելու վերաբերյալ:

Փաստաթուղթ	«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	15.12.2015թ, ՀՕ-161-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 87 (1176), 23.12.2015թ
Ուժի մեջ է	01.01.2016թ

#### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ ցանցային կապի միջոցներով հսկիչ-դրամարկղային մեքենաների կողմից օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության ուղարկումը հարկային մարմին պարտադիր է (բացառությամբ նախորդ տարվա արդյունքներով 500.0 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամկետներում, բայց ոչ ուշ, քան մինչև **2017 թվականի հունվարի 1-ը**:

Փաստաթուղթ	«Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	15.12.2015թ, ՀՕ-162-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 87 (1176), 23.12.2015թ
Ուժի մեջ է	01.01.2018թ

#### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխության համաձայն տուգանքը նշանակվում է գործունեության կասեցման մասին որոշում ընդունած լիազորված մարմնի ղեկավարի որոշմամբ և **պետական բյուջե է վճարվում որոշումն ընդունելուց հետո՝ 10-օրյա ժամկետում**:

Փաստաթուղթ	«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	15.12.2015թ, ՀՕ-163-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 87 (1176), 23.12.2015թ
Ուժի մեջ է	01.01.2018թ

#### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ սահմանված կարգով հաշվարկվածից ավելի վճարված գումարները մուտքագրվում են միասնական հաշվին «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 1-ով սահմանված կարգով:

Վճարողների կողմից հարկային և լիազոր մարմիններ ներկայացվող հաշվարկ-հաշվետվությունները սույն օրենքով սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու կամ չներկայացվելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 լրացած օրվա համար վճարողից գանձվում է տուգանք (նաև ստուգման ակտով)՝ հաշվարկված վճարի գումարի 5 տոկոսի չափով: Նշված տուգանքների հանրագումարը չպետք է գերազանցի հաշվարկված վճարի գումարը:

Փաստաթուղթ	«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
------------	--

Ամսաթիվը և համարը	15.12.2015թ, ՀՕ-165-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 87 (1176), 23.12.2015թ
Ուժի մեջ է	01.01.2018թ

**Համառոտ նկարագիր**

Օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների համաձայն՝

1. պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ ՀՀ տարածքում արտադրող և ԵՏՄ երկրներից ՀՀ տարածք ներմուծող անձինք մինչև այդ ապրանքների օտարումը դրոշմապիտակները ձեռք են բերում իրենց հաշվառման հարկային տեսչությունից: ՀՀ տարածք պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող անձինք (բացառությամբ ԵՏՄ երկրներից ներմուծողների) դրոշմապիտակները ձեռք են բերում իրենց հաշվառման մաքսատնից՝ մինչև այդ ապրանքների օտարումը:

2. Հարկային տեսչությունները և մաքսատները յուրաքանչյուր արտադրողի և ներմուծողի համար վարում են դրոշմապիտակների հաշվառման քարտեր՝ ըստ իրենց կողմից տրամադրվող դրոշմապիտակների տեսակների: Քարտում նշվում են տրամադրված և (կամ) հետ ընդունված դրոշմապիտակների քանակները, սերիաները և համարները:

3. Վնասված դրոշմապիտակները սույն հոդվածով սահմանված կարգով և դեպքերում վերադարձվում են հարկային կամ մաքսային մարմին՝ յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

4. Չօգտագործված կամ վնասված դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու, սահմանված դեպքերում հարկային տեսչությունների կամ մաքսատների կողմից հետ չընդունվելու կամ դրոշմապիտակների կորստի դեպքերում համապատասխան փաստն արձանագրվելու օրվա դրությամբ հարկ վճարողների կողմից հաշվարկվում են հարկային պարտավորություններ այն չափով, որ չափով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով կհաշվարկվեին դրանք, եթե դրոշմապիտակների տեսակին, քանակությանը և տարողությանը համապատասխանող ապրանքները հարկ վճարողի կողմից իրացված լինեին: Նշված ապրանքների վերաբերյալ հարկային մարմնում տեղեկատվության բացակայության դեպքում հարկային պարտավորություններ հաշվարկվում են պարտադիր դրոշմավորման ենթակա այն ապրանքների մասով, որոնց համար տվյալ հարկ վճարողի մոտ այդ ժամանակաշրջանում հաշվարկվում են առավելագույն հարկերը:

5. Հարկ վճարողը պիտանելիության ժամկետը լրացած, սահմանված կարգով դուրս գրված ապրանքների վրա փակցված դրոշմապիտակների տպագրության համար պետության կատարած ծախսերի չափով գումար է վճարում պետական բյուջե՝ այդ ապրանքների դուրսգրման օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում:

6. Դրոշմապիտակները կորցնելու կամ վնասվելու փաստն արձանագրելու (ուսումնասիրության, օպերատիվ-հետախուզական միջոցառումների) արդյունքներով արձանագրության կազմման կամ հարկ վճարողի կողմից դիմումի ներկայացման) օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում հարկ վճարողը նույն դրոշմապիտակների տպագրության համար պետության կատարած ծախսերի չափով գումար է վճարում պետական բյուջե:

7. Հարկ վճարողը կիրառությունից դուրս եկած դրոշմապիտակների տպագրության համար պետության կատարած ծախսերի չափով գումար է վճարում պետական բյուջե՝ դրանց կիրառությունից դուրս գալու օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում:



Փաստաթուղթ	«Կուտակային կեսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	15.12.2015թ, ՀՕ-166-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 87 (1176), 23.12.2015թ
Ուժի մեջ է	01.01.2018թ

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ սոցիալական վճարի պարտավորությունների հաշվառման նպատակով հարկային գործակալի (գործատուի) կամ սոցիալական վճարները օրենքով սահմանված դեպքերում ինքնուրույն կատարող անձանց համար հարկային մարմնում բացվում են անձնական հաշվի քարտեր: Անձնական հաշվի քարտի ձևը և վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը:

Սոցիալական վճարի պարտավորությունները մարվում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ով սահմանված կարգով:

Սոցիալական վճարի (բացառությամբ ճշտված հաշվարկի ներկայացման արդյունքում առաջացածի) պարտավորությունը տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար համարվում է մարված, եթե միասնական հաշվին մուտքագրված գումարները բավարար են այդ հաշվետու ժամանակահատվածի սոցիալական վճարը և տույժը մարելու համար:

Սոցիալական վճարի ճշտված հաշվարկների ներկայացման արդյունքում առաջացած լրացուցիչ պարտավորությունը հաշվառվում է ճշտված հաշվարկի փաստացի ներկայացման ամսաթվով:

Միասնական հաշվին մուտքագրված գերավճարները ենթակա են վերադարձման «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով:

Եթե հարկային գործակալը (գործատուն) ներկայացնում է ճշտված հաշվարկ, ճշտված հաշվարկ ներկայացնելու օրվա դրությամբ հաշվետու ժամանակահատվածում հարկային գործակալից (գործատուից) սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտ համարվող՝ եկամուտ ստացած անձն ազատվել է աշխատանքից (դադարել է նրա հետ կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիրը), և ճշտված հաշվարկի արդյունքում վերահաշվարկվում է (փոխվում է) աշխատանքից ազատված անձի սոցիալական վճարի պարտավորությունը, ապա փոփոխության արդյունքում առաջացած տարբերությունը հաշվառվում է որպես ճշտված հաշվարկ ներկայացրած գործատուի՝ ճշտված հաշվարկ ներկայացնելու արդյունքում առաջացած լրացուցիչ պարտավորություն:

Փաստաթուղթ	«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	15.12.2015թ, ՀՕ-167-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 87 (1176), 23.12.2015թ
Ուժի մեջ է	01.01.2016թ

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացումների և փոփոխության համաձայն՝

1. Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «ա»-«գ» ենթակետերով նախատեսված դեպքերում կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը օրենքով սահմանված այլ պայմանները բավարարելու դեպքում համարվում են (շարունակում են համարվել) շրջանառության հարկ վճարող, եթե այդ ենթակետերում նշված այլ անձինք հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և փաստացի գործունեություն չեն իրականացրել:

2. Շրջանառության հարկի վճարման դադարեցման պահից տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում առևտրային կազմակերպությունները՝ շահութահարկը (այդ թվում՝ կանխավճարները), անհատ ձեռնարկատերերը եկամտային հարկը (այդ թվում՝ կանխավճարները) և ԱԱՀ-ն հաշվարկում և վճարում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

3. Մինչև 2016 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում անձին շրջանառության հարկ վճարող համարվելու առումով բավարար է միայն այլ անձանց կողմից փաստացի գործունեություն իրականացված չլինելու հանգամանքը: Եթե կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը մինչև 2016 թվականի հունվարի 1-ը, օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «ա»-«գ» ենթակետերի համաձայն, չեն համարվել շրջանառության հարկ վճարող կամ դադարել են համարվել շրջանառության հարկ վճարող, ապա այս օրենքի ընդունումից հետո նրանց մասով հարկային պարտավորությունների վերահաշվարկ չի կատարվում:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	15.12.2015թ, ՀՕ-168-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 87 (1176), 23.12.2015թ
Ուժի մեջ է	01.01.2018թ

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ ՀՀ պետական բյուջե հարկային մարմինների կողմից հաշվեգրվող հարկերի մասով տնտեսվարող սուբյեկտի **միասնական հաշվին մուտքագրման** ենթակա գումարների որոշման, տվյալ հարկատեսակի հաշվանցումների ճշտության, օրենքով սահմանված կարգով ներկայացվող տեղեկությունների ճշտության արձանագրման, հսկիչ գնումների իրականացման, Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերի դրույթներին համապատասխան՝ օտարերկրյա պետության լիազորված մարմնի հարցումներին պատասխանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից գանձված հարկի գումարը վերադարձնելու, արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման և իրացման, ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, պատրաստի արտադրանքի, ապրանքների պակասորդի, ինչպես նաև իրացման փաստացի գների (սակագների) (այդ թվում՝ միջին) չափագրման նպատակով հարկային մարմինը կարող է իրականացնել ուսումնասիրություններ:

Փաստաթուղթ	«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	30.12.2015թ, ՀՕ-199-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 91 (1180), 30.12.2015թ
Ուժի մեջ է	09.01.2018թ

### **Համառոտ նկարագիր**

Օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ սոցիալական վճարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում օրենքով սոցիալական վճար հաշվարկելու և փոխանցելու (գանձելու) պարտականություն ունեցող անձից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում է վերջինիս:

Մինչև գումարի գանձման վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալը սոցիալական վճար կատարողի գույքի վրա կարող է արգելանք դրվել: Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով արգելանքը դնում է հարկային մարմինը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածով սահմանված դեպքերում և կարգով:

Սոցիալական վճար կատարողի կողմից գումարը գանձելու մասին որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը գանձվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով:

Գանձման ընթացքում սոցիալական վճար կատարողի կողմից պարտավորությունները մարվելու դեպքում գումարը գանձելու մասին որոշումն ուժը կորցրած է ճանաչվում, և գանձումը դադարեցվում է:

Սոցիալական վճար կատարողի կողմից չկատարված՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող սոցիալական վճարի գծով պարտավորությունների գանձման նպատակով հարկային մարմինն իրավունք ունի պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով ձեռք բերելու սոցիալական վճար կատարողի պահանջի իրավունքը և ստացված գումարներն ուղղելու սոցիալական վճար կատարողի պարտավորությունների մարմանը:

Ընդ որում, հարկային մարմինն է անցնում իրավունքի անցման պահին առկա ծավալով պարտավորության (ներառյալ՝ ապառքը և դրա նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերը) պահանջի իրավունքը, իսկ պահանջի իրացման պահին, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սոցիալական վճարների տույժերի հաշվարկման ժամկետները, կատարվում է պարտավորությունների վերահաշվարկ:

Որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող սոցիալական վճարի գծով պարտավորությունների կատարման ապահովման միջոց՝ հարկային մարմնի և սոցիալական վճար կատարողի միջև կարող է կնքվել գրավի պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Գրավի պայմանագիր կնքվելու դեպքում պարտավորությունները մարելու նպատակով կազմվում է աստիճանական մարման ժամանակացույց:

## 1.2 ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնության կիրառման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	03.12.2015թ, N1461-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°86 (1175), 21.12.2015թ
Ուժի մեջ է	22.12.2015թ.

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնության կիրառման կարգը՝ համաձայն հավելվածի: Եթե պարզվում է, որ ներկայացված և առկա տեղեկությունները համապատասխանում են օրենքով սահմանված պահանջներին, ապա եռօրյա ժամկետում քաղաքացուն թույլատրվում է առանց մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) վճարման՝ ներմուծել իր անձնական օգտագործման գույքը:

Փաստաթուղթ	«Վերամշակում՝ մաքսային տարածքում» ընթացակարգով ներմուծվող օտարերկրյա ապրանքների՝ համարժեք ապրանքներով փոխարինման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	03.12.2015թ, N1462-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°86 (1175), 21.12.2015թ
Ուժի մեջ է	31.12.2015թ.

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ներմուծվող օտարերկրյա ապրանքների՝ համարժեք ապրանքներով փոխարինման կարգը՝ համաձայն հավելվածի:

Փաստաթուղթ	«Ապրանքների հայտարարագրման ժամանակ մաքսային մարմնի կողմից ապրանքների դասակարգման վերաբերյալ անհամաձայնության դեպքում հայտարարատուի կողմից մաքսային մարմին ներկայացվող՝ ապրանքների դասակարգմանն առնչվող լրացուցիչ տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	14.01.2016թ, N 13-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°4 (1184), 20.01.2016թ
Ուժի մեջ է	30.01.2016թ.

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է ապրանքների հայտարարագրման ժամանակ մաքսային մարմնի կողմից ապրանքների դասակարգման վերաբերյալ անհամաձայնության դեպքում

հայտարարատուի կողմից մաքսային մարմին ներկայացվող՝ ապրանքների դասակարգմանն առնչվող լրացուցիչ տեղեկությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:

Փաստաթուղթ	«ՀՀ սահմանով արտահանվող ապրանքների մաքսային արժեքի որոշման բացատրական նմուշները սահմանելու և ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 2170-N որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	20.01.2016թ, N33-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°8 (1188), 03.02.2016թ
Ուժի մեջ է	04.02.2016թ.

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է ՀՀ սահմանով արտահանվող ապրանքների մաքսային արժեքի որոշման բացատրական նմուշները՝ համաձայն հավելվածի:

Ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի «Մաքսային արժեքի որոշման բացատրական նմուշները հաստատելու մասին» N 2170-N որոշումը:

Փաստաթուղթ	«Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման արդյունքների՝ համարժեք օտարերկրյա ապրանքներով փոխարինման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	20.01.2016թ, N41-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°8 (1188), 03.02.2016թ
Ուժի մեջ է	13.02.2016թ.

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման արդյունքների՝ համարժեք օտարերկրյա ապրանքներով փոխարինման կարգը՝ համաձայն հավելվածի:

Փաստաթուղթ	«ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N503-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	29.01.2016թ, N48-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°9 (1188), 05.02.2016թ
Ուժի մեջ է	01.03.2016թ.

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի Կոտայքի տարածքային հարկային տեսչությունը և Նաիրիի տարածքային հարկային տեսչությունը միաձուլման ձևով

վերակազմակերպվել են՝ կազմավորելով Կոտայքի տարածքային հարկային տեսչություն, կենտրոնը՝ Աբովյան քաղաք:

2. ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի էջմիածնի տարածքային հարկային տեսչությունը և Արմավիրի տարածքային հարկային տեսչությունը միաձուլման ձևով վերակազմակերպվել են՝ կազմավորելով Արմավիրի տարածքային հարկային տեսչություն, կենտրոնը՝ Վաղարշապատ քաղաք:

Փաստաթուղթ	«ՀՀ ֆինանսների նախարարության մաքսային ծառայության և ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	29.01.2016թ, N54-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°10 (1188), 10.02.2016թ
Ուժի մեջ է	20.02.2016թ.

#### Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարության մաքսային ծառայության և ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման կարգը՝ համաձայն հավելվածի:

Փաստաթուղթ	«Մաքսային ապահովման միջոցների պատրաստման նկատմամբ պահանջները և դրանց կիրառման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	11.02.2016թ, N107-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°13 (1193), 19.02.2016թ
Ուժի մեջ է	20.02.2016թ.

#### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է մաքսային ապահովման միջոցների պատրաստման նկատմամբ պահանջները և դրանց կիրառման կարգը՝ համաձայն հավելվածի:

### 1.3 Հրամաններ, պաշտոնական պարզաբանումներ և այլ իրավական ակտեր

Փաստաթուղթ	«Հարկային մարմնի և մասնակիցների ռեեստր վարողի միջև տեղեկատվության փոխանակման ընթացքում առաջացած սխալների շտկման գործընթացի տեխնիկաթրագրային և ընթացակարգային հարցերը կարգավորելու կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	30.10.2015թ, N 740-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 2 (545), 15.01.2016թ

Ուժի մեջ է	25.01.2016թ
------------	-------------

### Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվել է հարկային մարմնի և մասնակիցների ռեեստր վարողի միջև տեղեկատվության փոխանակման ընթացքում առաջացած սխալների շտկման գործընթացի տեխնիկաձրագրային և ընթացակարգային հարցերը կարգավորելու կարգը՝ համաձայն հավելվածի:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի N764-Ն հրամանում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	08.01.2016թ, N 1-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 3 (546), 01.02.2016թ
Ուժի մեջ է	11.02.2016թ

### Համառոտ նկարագիր

Հրամանով ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի «Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» N 764-Ն հրամանի հավելվածով հաստատված՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևում կատարվել են փոփոխություն և լրացումներ, ինչը պայմանավորված է «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների (24.11.2015թ. ՀՕ-167-Ն և 07.03.2015թ. ՀՕ-38-Ն) ընդունմամբ:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 4-ի n 1417-N հրամանում լրացում կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	01.02.2016թ, N 30-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 4 (547), 19.02.2016թ
Ուժի մեջ է	01.04.2016թ

### Համառոտ նկարագիր

Հրամանով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 4-ի «Ալցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների վերաբերյալ հրահանգը հաստատելու և ՀՀ պետական եկամուտների նախարարի 2000 թվականի հոկտեմբերի 20-ի N 02/1291 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1417-Ն հրամանով հաստատված հավելվածի N 1 ձևի՝ ալցիզային հարկի հաշվարկի լրացման կարգում լրացում է կատարվել, համաձայն որի՝ 2016 թվականի երկրորդ եռամսյակի համար ներկայացվող հաշվարկում ԱՏԳ ԱԱ 2208 (բացառությամբ 2208 20, 2208 30, 2208 40), 2402 10

00011, 2402 90 00011, 2402 10 00012, 2402 90 00012, 2402 20 90011, 2402 20 10011, 2402 90 00013, 2402 20 90012, 2402 20 10012, 2402 90 00014 ծածկագրերին դասվող ապրանքների մասով 2016 թվականի ապրիլ ամսվա և մայիս-հունիս ամիսների ընթացքում օտարված ապրանքների վերաբերյալ տվյալները (ԱՏԳ ԱԱ ծածկագիր, անվանում, հարկման բազայի միավոր, քանակ (ծավալ), սպիրտայնության աստիճան, միավորի բացթողնման գին, ակցիզային հարկի դրույքաչափ, ակցիզային հարկի գումար) հաշվարկի [5.1]-[5.8]-րդ սյունակներում լրացվում են առանձին տողերով՝ ըստ ակցիզային հարկի առանձին դրույքաչափերի:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 17-ի N 235-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	01.02.2016թ, N 31-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 4 (547), 19.02.2016թ
Ուժի մեջ է	29.02.2016թ

#### **Համառոտ նկարագիր**

Հրամանով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 17-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների ավելացված արժեքի հարկով և (կամ) ակցիզային հարկով հարկման բազաների, հաշվարկված հարկի գումարների վերաբերյալ ծանուցագրի ձևը հաստատելու մասին» N 235-Ն հրամանը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2012 թվականի հուլիսի 21-ի N 229-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	01.02.2016թ, N 32-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 4 (547), 19.02.2016թ
Ուժի մեջ է	29.02.2016թ

#### **Համառոտ նկարագիր**

Հրամանով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2012 թվականի հուլիսի 21-ի «Հարկային մարմնից հարկային հաշիվների ձևերի ձեռքբերման հայտի և ստացականի ձևերը հաստատելու մասին» N 229-Ն հրամանը:

Փաստաթուղթ	«Անհատ ձեռնարկատերի (նոտարների) գործունեություն
------------	---



	չիրականացնելու մասին հայտարարության վերաբերյալ » ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	01.02.2016թ, N 1
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 4 (547), 19.02.2016թ
Ուժի մեջ է	01.02.2016թ

### Համառոտ նկարագիր

Պաշտոնական պարզաբանման համաձայն՝ օրենքով սահմանված ժամկետներում շրջանառության հարկ վճարող համարվելու համար հայտարարություն ներկայացրած անհատ ձեռնարկատերերը (նոտարները) գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն ներկայացնելուց հետո «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված չափերով եկամտային հարկ չեն հաշվարկում (վճարում):

Շրջանառության հարկ վճարող համարվելու համար հայտարարություն ներկայացրած անհատ ձեռնարկատերերը (նոտարները) գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն չներկայացնելու դեպքում եկամտային հարկը հաշվարկում (վճարում) են «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված չափերով:

Անհատ ձեռնարկատերերի (նոտարների) կողմից գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն ներկայացնելուց հետո հետագա յուրաքանչյուր օրացուցային տարվա համար մինչև տվյալ տարվա փետրվարի 20-ը ներառյալ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելը հիմք չէ հարկ վճարողի գործունեությունը վերսկսած համարելու և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված չափերով եկամտային հարկ հաշվարկելու (վճարելու) համար:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությամբ սահմանված դրույթների վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	01.02.2016թ, N 2
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 4 (547), 19.02.2016թ
Ուժի մեջ է	01.02.2016թ

### Համառոտ նկարագիր

Պաշտոնական պարզաբանման համաձայն՝ օրացուցային տարվա ընթացքում նոր ստեղծված (պետական գրանցում ստացած, որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված) ԱԱՀ վճարողը Օրենքով սահմանված մնացած բոլոր պայմանները բավարարված համարվելու դեպքում ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները կարող է հաշվանցել առանց մատակարարներին կամ ծառայություն մատուցողներին վճարում կատարելու:

Օրենքով սահմանված մնացած բոլոր պայմանները բավարարված համարվելու դեպքում ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ԱԱՀ վճարողը 2016 թվականի հունվարի 1-ից կարող է հաշվանցել առանց մատակարարներին կամ ծառայություն մատուցողներին վճարում կատարելու նաև այն դեպքերում, երբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների հարկվող շրջանառությունը (առանց ԱԱՀ-ի) 2014 թվականի ընթացքում չի գերազանցել 100 միլիոն դրամը, իսկ 2015 թվականի ընթացքում գերազանցել է 500 միլիոն դրամը:

## 2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

### 2.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

2015թ-ի դեկտեմբերի 20-ից մինչև 2016թ-ի հունվարի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ընդունվել է 38 որոշում, որից բավարարվել է 22, բավարարվել է մասնակի 4, մերժվել է 11, կասեցվել է 1:

2016թ-ի հունվարի 20-ից մինչև 2016թ-ի փետրվարի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ընդունվել է 48 որոշում, որից բավարարվել է 25, բավարարվել է մասնակի 6, մերժվել է 17:

### 2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ<sup>1</sup>

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	Հաշվետու տարի 2015		
			Դեկտեմբեր	Հունվար-Դեկտեմբեր	Աճի տեմպ %
			31	32	33
1	ՀՀ ՖՆ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք <sup>3</sup>	մլն դրամ	96,111.3	1,065,644.2	100.7
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում	մլն դրամ	92,454.5	1,033,239.0	100.9
1.1.1	ԱԱՀ, այդ թվում	մլն դրամ	34,272.0	423,933.5	96.3
1.1.1.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	մլն դրամ	5,561.1	45,659.9	-
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	10,079.7	103,659.9	100.1
1.1.3	Եկամտային հարկ <sup>4</sup>	մլն դրամ	32,381.2	320,220.9	106.2
1.1.4	Ակցիզային հարկ, այդ թվում	մլն դրամ	4,597.7	48,988.9	96.9

<sup>1</sup> Ներառված են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված գումարների գծով եկամուտները

1.1.4.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	մլն դրամ	463.5	3,678.6	-
1.1.5	Շրջանառության հարկ	մլն դրամ	941.4	11,859.4	75.8
1.1.6	Արտոնագրային վճար	մլն դրամ	570.5	6,570.8	98.2
1.1.7	Հաստատագրված վճար	մլն դրամ	220.7	3,105.0	63.9
1.1.8	Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	մլն դրամ	3,087.4	31,255.6	88.9
1.1.9	Մաքսատուրք, այդ թվում	մլն դրամ	5,156.7	61,487.5	127.0
1.1.9.1	ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված	մլն դրամ	4,964.11	53,445.4	-
1.1.10	Նպատակային սոցիալական վճար	մլն դրամ	1,325.0	10,875.6	-
1.1.11	Այլ հարկային եկամուտներ <sup>5</sup>	մլն դրամ	-177.9	11,281.9	94.4
1.2	Պետական տուրք	մլն դրամ	3,656.7	32,405.2	82.5

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	Հաշվետու տարվան նախորդող տարի	Հաշվետու տարի 2016	
			Հունվար-Դեկտեմբեր	Հունվար	Աճի տեմպ %
			1	2	3
1	ՀՀ ՖՆ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք	մլն դրամ	1,065,644.2	73,626.6	97.3
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում	մլն դրամ	1,033,239.0	71,956.7	97.2
1.1.1	ԱԱՀ, այդ թվում	մլն դրամ	423,933.5	31,067.3	92.7
1.1.1.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	մլն դրամ	45,659.9	3,300.7	-
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	103,659.9	6,753.5	137.9
1.1.3	Եկամտային հարկ <sup>4</sup>	մլն դրամ	320,220.9	22,511.1	100.4
1.1.4	Ակցիզային հարկ, այդ թվում	մլն դրամ	48,988.9	3,209.7	89.0
1.1.4.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	մլն դրամ	3,678.6	268.3	-
1.1.5	Շրջանառության հարկ	մլն դրամ	11,859.4	1,703.7	142.1
1.1.6	Արտոնագրային վճար	մլն դրամ	6,570.8	435.9	92.2
1.1.7	Հաստատագրված վճար	մլն դրամ	3,105.0	227.0	88.6
1.1.8	Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	մլն դրամ	31,255.6	732.8	38.4
1.1.9	Մաքսատուրք, այդ թվում	մլն դրամ	61,487.5	2,773.3	77.6
1.1.9.1	ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված	մլն դրամ	53,445.4	2,534.6	-
1.1.10	Նպատակային սոցիալական վճար	մլն դրամ	10,875.6	742.9	142.8
1.1.11	Այլ հարկային եկամուտներ <sup>5</sup>	մլն դրամ	11,281.9	1,799.4	109.8
1.2	Պետական տուրք	մլն դրամ	32,405.2	1,669.9	98.9

### 2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2015թ.
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝		1876
1.1	Ֆիզիկական անձ		1566
1.2	Իրավաբանական անձ		310
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ		-
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	203
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	2,324.2
5	Գանձման որոշումների և սնանկության հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	<b>2015թ. հունվար- դեկտեմբեր<sup>2</sup></b> 20629
5.1	Բավարարված	հատ	859
5.2	Մերժված	հատ	22
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	10225
6	Գանձման որոշումներով և սնանկության հայցերով գանձված գումարներ	մլրդ դրամ	16.1
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	34202
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	670.1
8	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	2711
8.1	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով	մլրդ դրամ	7.1

<sup>2</sup> Ներառված չէ մաքսային գործերով, բռնագանձման վերաբերյալ տեղեկատվությունը:

	փաստացի գանձված գումարներ		
9	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	188
9.1	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլրդ դրամ	2.0
10	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	Հատ	688
10.1	Ավարտված	Հատ	34
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	Հատ	34
10.3	Կասեցված	Հատ	37
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլրդ դրամ	8.5

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2016թ.
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝		1633
1.1	Ֆիզիկական անձ		1386
1.2	Իրավաբանական անձ		247
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ		
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	Հատ	31
4	Պետական բյուջեի հետ	մլն դրամ	295.0

	փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ		
5	Գանձման որոշումների և սնանկության հայցերի թիվ, այդ թվում՝	Հատ	<b>2016թ. հունվար<sup>3</sup></b> 1614
5.1	Բավարարված	Հատ	96
5.2	Մերժված	Հատ	-
5.3	Քննության ընթացքում գտնվող	Հատ	1445
6	Գանձման որոշումներով և սնանկության հայցերով գանձված գումարներ	մլրդ դրամ	1.4
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	Հատ	2024
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	42.9
8	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	Հատ	107
8.1	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	185.1
9	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	Հատ	1
9.1	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	37.4
10	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	Հատ	452
10.1	Ավարտված	Հատ	2
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	Հատ	2

3 Ներառված չէ մաքսային գործերով, բռնագանձման վերաբերյալ տեղեկատվությունը:

10.3	Կասեցված	Հատ	0
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	406.5